ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԻՐԱՆԱԿԱՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՄԱԿՎԱ ՄԱՐԶՈՒՄ 1907 Թ.

Խ. Հ. ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ

1. Մակվա խանության առաջացումը

Մակվա մարզը[1] գտնվում է Իրանի (Պարսկաստանի) հյուսիս-արևմտյան ծայրանկյունում՝ Փոքր Մասիսից հարավ-արևելք ընկած տարածության վրա, Արաքսի աջ ափին։

Տաճկաստանի ու Ռուսաստանի սահմանների արանքում գտնվող, Թեհրանից ու Թավրիզից հեռու ընկած ու նրանց հետ քիչ թե շատ հարմար ճանապարհով չկապված, հիմնականում լեռնային այս մարզում XX դարի սկզբին դրության լիակատար տերն ու տնօրենը սարդարն (մարզպան) ու խաներն էին։

Իրանի կենտրոնական կառավարության գոյությունն արտահայտվում էր Ռուսաստանին ու Տաճկաստանին սահմանակից մի քանի կետերում միայն, որտեղ կային սահմանապահ ու մաքսային պաշտոնյաներ։

Ամբողջ Մակվա մարզը XIX դարի վերջերին ոչ մի հարկ ու տուրք չէր վճարում Իրանի կենտրոնական կառավարությանը, եթե հաշվի չառնենք այն, որ սարդարները մերթ ընդ մերթ հպատակային երկրպագությամբ ու մեծամեծ նվերներով ներկայանում էին Թեհրան՝ շահնշահին կամ Թավրիզ գահաժառանգին։

Մակվա մարզի բոլոր գյուղերը, առանց բացառության, դարձել էին մանր ու մեծ խաների ժառանգական սեփականություն, ըստ որում առյուծի բաժինը պատկանում էր հենց իրեն՝ սարդարին, որն ուներ երեք հարյուրից ավելի գյուղ։

Բոլոր խաներն արենակցական կապերով միացած էին։ Նրանք բոլորն էլ սերված էին Ալի-խանի ընտանիքից. XIX դարի սկզբներին Ալի-խանը Թեհրանի կողմից հաստատվել էր Մակվա մարզի պետի՝ սարդարի պաշտոնում։

Սարդար Ալի-խանի մասին Հայկական մարզի շնորհալի պատմաբան Ի. Շոպենը 1830-ական թթ. համար արձանագրել է. «Այստեղ պետք է հիշատակել նաև Խոքի մհալը (գտնվում է Արաքսի ձախ ափին՝ Շարուրի ու Նախիջևանի միջև ընկած տարածության վրա — Խ. Ա.), ուր ամեն ձմեռ քշվում-բերվում են Մակվա Ալի-խանին պատկանող խաշների բազմաթիվ հոտերը»[2]։

Այն ժամանակ Մակվա մարզի բոլոր գյուղերը պետական են եղել, գյուղացիությունը գանձարանին վճարել է բնատուրք՝ բերքի տասանորդի չափով։

Խանական-ֆեոդալական հողատիրություն դեռևս չէր առաջացել։

Սակայն, օգտագործելով կենտրոնական իշխանության թուլությունը. օգտվելով մարզի աշխարհագրական մեկուսացած դիրքից, շատ զգալի չափով կրելով ցարական Ռուսաստանի ֆեոդալական ազդեցությունը, ընդօրինակելով հենց սահմանակից Երևանի ու Նախիջևանի նորելուկ կալվածատերերին՝ ինքնակոչ խաներին ու բեկերին, սարդար Ալի-խանն ու նրա ժառանգորդ-

---

[1] Հայաստանի աշխարհագրության ու պատմության մեջ այժմյան Մակվա մարզը կոչվել է Արտազ գավառ, որի մերձմասիսյան սահմաններում էին գտնվում Ավարայրի դաշտն ու Տղմուտ գետը։

XIX դարի սկզբին Մակվա մարզում դեռևս կային բավական թվով հայաբնակ վայրեր՝ հայկական անուններով, ինչպես օրինակ՝ Անձուկ, Գաջուտ, Հասուն, Փառախոտիկ, Օղակ և այլն։

Ռուս-պարսկական վերջին՝ 1826—28 թթ. պատերազմին հաջորդած հայկական մեծ արտագաղթից հետո (դեպի Ռուսաստանին միացված երկրամասերը) ամբողջ Մակվա մարզում հայ բնակչություն մնացել էր միմիայն Մակու քաղաքում և Քիշմիշթափա ու Վանք գյուղերում։

[2] И. Шопен, Исторический памятник состояния Армянской области, Петербург, 1852, էջ 522։

ները, Թեհրանի ու Թավրիզի ազդեցության աստիճանական վերացման կարգով, շուրջ մեկ դարի ընթացքում իրենք փաստորեն յուրացրին, նաև իրենց ցեղակիցներին պարգևեցին Մակվա մարզի բոլոր գյուղերն ու հողերը։

Սարդար Ալի-խանի տոհմի մեծ ու պստիկ խաներն ու խանումներն էին Մակվա ամբողջ մարզի գյուղերի ու բոլոր հողերի ֆեոդալական տերերը XX դարի սկզբին։

Սրանց անունով էր, որ իրանական այդ մարզն սկսել էր կոչվել Մակվա խանություն՝ ցարական Ռուսաստանում ընդունված տերմինաբանությամբ։

2. Մակվա մարզը կապիտալիստական հարաբերությունների ոլորտում

Արդեն XIX դարի վերջերին Մակվա մարզի գյուղացիությունը տնքում էր խաների ահռելի շահագործման ներքո։ Այդ շահագործումը գնալով ավելի էր սաստկանում՝ կապիտալիստական տնտեսության ներխուժման հետևանքով։ Ուժեղանում էին շուկայական հարաբերությունները՝ նախկին բնատնտեսական միջավայրում։ Առևտուրն ու հաղորդակցությունը Ռուսաստանի հետ տարեց-տարի ծավալվում էին, նամանավանդ Ալեքսանդրապոլ — Երևան — Ջուլֆա երկաթուղագծի կառուցումից հետո։ Գնալով մեծանում էին Արաքսի ձախ ափից նավթ, շաքար, ճոթեղեն, երկաթեղեն և շատ ուրիշ ապրանքներ բերող քարավանների շարքերը։

Մակվա մարզն իր ամբողջ տնտեսությամբ և առևտրով ամենից ավելի կապված էր Ռուսաստանի հետ, որը հախուռն կերպով ընթանում էր կապիտալիստական զարգացման ուղիով։ Դեպի ցարական Ռուսաստանն էր ուղղված նաև ֆեոդալների՝ խաների հայացքը։ Հենց ինքը՝ սարդար Մուրթուզա-Կուլի խանն ազգակցական սերտ կապ էր հաստատել Երևանի խոշոր կալվածատեր Փանահ խանի հետ, որի միջոցով շփվում էր ցարական բարձր ատյանների հետ։ Նա յուր ոսկու հարստության զգալի մասը պահում էր ռուսական պետական բանկերում (Երևան ու Թիֆլիս)։

Ռուսաստանի հետ ունեցած բոլոր կապերը նախ և առաջ չափազանց մեծացրել էին խաների կենցաղային պահանջմունքները։ Հինավուրց շենքերը, կահույքը, հագուստեղենը, մառանն ու խոհանոցն այլևս չէին բավարարում խաներին։ Կառուցվում ու կահավորվում էին նոր պալատներ՝ եվրոպական ձևով։ Սարդար Մուրթուզա-Կուլի խանի՝ Բախչաջուղ ամառանոցում կառուցել տված նոր ամարանը (դղյակը), օրինակ, կարող էր մրցել Ռուսաստանի խոշոր քաղաքների լավագույն շենքերի հետ (առաջին երկհարկանի, թիթեղածածկ շենքը Մակվա մարզում)։ Այդ միևնույն ամառանոց-դղյակի փառահեղ դահլիճը կարդարելու համար Ռուսաստանում պատվիրված միայն երկու մեծ հայելիների ու կահույքի համար սարդար Մուրթուզա-Կուլի խանը վճարել էր մի քանի հազար ռուբլի ոսկով։ Այդ հայելիներն Արաքսի ափից մինչև Մակու հասցնելն օլամի (պարհակի) նոր դուռ էր բաց արել ճանապարհին ընկած գյուղերի համար, քանի որ անհրաժեշտություն էր զգացվել ուղի հարթել ու կարգավորել հայելիները փոխադրող առաջին ֆուրգոնների համար։

Չափազանց մեծացել էին խաների ապրուստի ու վայելքների հետ կապված ծախսերը։ Մահմեդական կրոնի արգելանքին հակառակ՝ ալկոհոլի գործածությունը սովորական երևույթ էր դարձել խաների շրջանում։ Ռուսաստանից և Թուրքիայից ստացվում էին թանկարժեք կոնյակներ, իսկ տեղում՝ իրանական ընտիր չամիչից թորվում էր թունդ օղի (բաշ արաղ)։ Իրենց սանձարձակ պահանջմունքներին ու կրքերին հագուրդ տալու բնագավառում նեղվելով տեղական միջավայրի ճնշումից՝ խաները բուժվելու կամ մի այլ պատրվակով մեկնում էին Ռուսաստան (Երևան ու Թիֆլիս, մասամբ էլ Նախիջևան) և այստեղ անկաշկանդ մատնվում էին խրախճանքի ու ցոփության։

Այս բոլոր ճոխությունների և նոր վայելքների համար պահանջվում էր հնչուն դրամ, որի միակ աղբյուրը խաների համար՝ իրենց բացարձակ կամայականությանը մատնված իրավազուրկ գյուղացիությունն էր։

3. Գյուղացիական տուրքերն ու պարտույթները

Մակվա մարզում խաների սահմանած գյուղացիական տուրքերի ու պարտույթների մասին տվյալներ չկան։

Այդ բնագավառում գոյություն ունեցած փաստացի դրությունը պատկերելու համար առաջ եմ բերում ընդհանուր տեղեկություններ մի գյուղի վերաբերյալ, որի հողատիրական պայմանե-

ը լինելով նույնը, ինչ Մակվա մարզի բոլոր գյուղերում, ինձ շատ լավ ծանոթ են եղել մանուկ հասակից ի վեր։

Քիշմիշթափան էր այդ գյուղը, որտեղ հաստատվել ու հողագործությամբ էր զբաղվում անցյալում դարբին իմ հայրը։ Քիշմիշթափա գյուղը տեղադրված է Մակու քաղաքի հյուսիս-արևմտյան կողմում, 16 կիլոմետր հեռավորության վրա, 50 տուն հայ բնակչությամբ։ Հայկական գյուղն օրինակ վերցնելը բնավ չի փոխում, ավելի ևս չի սաստկացնում գյուղացիական տուրքերի ու պարտությունների համընդհանուր պատկերն ամբողջ Մակվա մարզի անխտիր բոլոր գյուղերի համար, քանի որ բեկորացած հայ բնակչության նկատմամբ տնտեսական ասպարեզում խտրականություն կամ հատուկ ճնշում չենք նկատել Իրանի այս մասում։

Թվարկեմ Քիշմիշթափա գյուղի տուրքերն ու պարտությունները սարդար Ալի-խանի թոռ Այպար-խանի հանդեպ։

ա) 1900—1907 թթ. Քիշմիշթափա գյուղի հողագործները գյուղատեր Այպար-խանին վճարում էին բահրա կամ բնատուրֆ՝ ամեն տեսակի ցանքերից ստացված բերքի մեկ հինգերորդ մասի՝ հնգնորդի չափով[3]։ Բահրայի գանձումը լիովին ապահովելու համար Այպար-խանը Քիշմիշթափայի բահրան ամեն տարի տալիս էր վարձակալության։ Հունիս-հուլիս ամիսներին, երբ հունձն արդեն մոտեցած էր լինում, գյուղի բահրան վարձակալել ցանկացողները գալիս էին ստուգելու ցանքերի տարածությունն ու դրությունը և որոշելու սպասվող բերքի մոտավոր չափերը։ Այսպիսի ստուգումներից հետո այցելուներից յուրաքանչյուրը ներկայանում էր գյուղատեր խանին և առաջադրում յուր պայմանը։ Եթե ամենից շատ բահրա առաջարկող, բայց միշտ վճարունակ անձին տալիս էր տվյալ տարում գյուղից բահրա գանձելու արտոնագիր։ Եթե եղած առաջարկներից ոչ մեկը որևէ պատճառով ընդունելի չէր լինում խանի համար, այդ դեպքում նա գյուղի տվյալ տարվա բահրան գանձելու գործը հանձնարարում էր յուր պատուսխանատու ծառաներից մեկին։ Բահրա գանձողը կոչվում էր շահնա։ Բերքահավաքից մեկ-երկու շաբաթ առաջ շահնան գալիս էր գյուղ ու հսկում, որպեսզի ամբողջ բերքն ուղղակի կալ բերվի, ոչ մի խուրձ տուն չտարվի։ Կալերն էլ տեղադրված էին գյուղի բնակելի շրջագծից դուրս գտնվող, բոլորովին առանձնացած տարածության վրա։ Կալսումն սկսվելու պահից ի վեր շահնան դիտում ու հսկում էր, որպեսզի կալերից ոչինչ չտարվի տները։ Արևամուտից հետո, երբ կալման աշխատանքները դադարեցվում էին բոլոր կալերում, շահնան գյուղացիների ձեռքով չափում էր պատրաստի շեղջերն ու վերցնում հնգնորդ-բահրան։ Չչափված ու լիովին չգտված շեղջերը շահնան դաջում էր, որպեսզի հացահատիկն առանց բահրայի հատուցման տուն չտարվի։ Շահնան դաջն ստանում էր գյուղատեր խանից։ Դաջը փայտից շինված ու մալաի նմանվող մի հարմարանք էր՝ կիսաղյուսի մեծությամբ. նրա վերևի կողմում ամրացված էր բռնակը, իսկ ներքևի կողմում մեխված էին փայտաձողիկներից շինված նախշեր։ Հացահատիկի վրա դնելու և թույլ կերպով սեղմելու դեպքում դաջը գոյացնում էր յուրահատուկ կնիք։ Շահնան սովորաբար դաջում էր շեղջի շրջագիծն ու գագաթը, իսկ մեծ շեղջեր եղած ժամանակ՝ նաև շեղջագոտին։ Դաջվում էր նաև կիսավարտ էրանը, որտեղ հատիկն զգալի չափով զատված էր լինում դարմանից և մոտենում էր իսպառ զտվելուն ու շեղջ կազմելուն։ Յուրաքանչյուր կալատեր պետք է ամբողջ գիշերն արթուն հսկեր և անխափան պահեր դաջակնիքները, որոնց խախտվելու դեպքում շահնան վնասված շեղջից կը-վերցներ այնքան բահրա, որքան ինքը կորոշեր։

1900—1907 թթ. Քիշմիշթափա գյուղի տարեկան բահրան վարձակալության էր վերցվում 800—1000 սոմար հացահատիկով։ Մեկ սոմարը 12 կոտ կամ չանաղ է և հավասար է չորս փթի կամ 2/3 ցենտների։ Այսպիսով՝ Քիշմիշթափա փոքրիկ գյուղն ամեն տարի Այպար-խանին միջին հաշվով բահրա էր տալիս 900 սոմար կամ 600 ցենտներ (3600 փութ) հացահատիկ, հիմնականում՝ ցորեն։

Հողօգտագործման ասպարեզում Քիշմիշթափա գյուղի բնակչությունը բաժանվում էր հետևյալ խմբերի։

---

3 Թե խաները ո՞ր ժամանակից սկսած բահրայի չափ էին դարձրել բերքի հնգնորդը, այդ մասին տեղեկություններ չկան։

Հայտնի է, սակայն, որ մինչև Մակվա մարզի արքունական գյուղերի սեփականացումը սարդար Ալի-խանի ու նրա ժառանգորդների կողմից՝ մհալի բոլոր գյուղերում բահրայի չափը տասանորդն էր։ Տասանորդի չափով էր բահրա գանձվել հարևան Նախիջևանի ու Երևանի խանությունների նաև մուլքադարական գյուղերում՝ մինչև այս երկրամասերի միացումը Ռուսաստանին (1828 թ.)։

ա) Համփա՝ 40-ական	սոմար	ցանքատարածությամբ	8 ծուխ
բ) Կիսան՝ 20-ական	»	»	26 »
գ) Պճեղ՝ 10-ական	»	»	14 »
դ) Ցանքաղուրկ[4]	»	»	12 »
		Ընդամենը	60 ծուխ

Մակվա մարզում միջակ գյուղացու հատկանիշը կիսանն էր։

Եթե Քիշմիշթափա գյուղի ցանքատեր բոլոր տնտեսություններն այդ չափանիշով վերածենք կիսանի, կստանանք 50 կիսան։ Բաժանելով այս թվի վրա ամբողջ գյուղից գանձվող 900 սոմար բահրան (տարեկան միջինը), ղուրս կգա, որ Քիշմիշթափա գյուղի միջակ տնտեսությունից տարեկան գանձվում էր 18 սոմար կամ 12 ցենտեր (72 փութ) բահրա։ Բայց այսպիսի հավասարեցուցիչ բաժանումը թվաբանական-մեխանիկական է։ Իրականում դրությունը շատ ավելի ծանր էր միջակ, նամանավանդ չքավոր տնտեսությունների համար։ Պետք է հաշվի առնել, որ ունևոր տնտեսությունների՝ համփաների ձեռքում կենտրոնացված էին գյուղի լավագույն հողերը։ Դրանից զատ նրանք ունեին արտերը պարարտացնելու հնարավորություններ (գոմաղբ ու լծկաններ), ուրեմն և միշտ էլ ապահովված էին բարձր բերքով։ Հացահատիկային ցանքերի բերքատվությունն այս խմբում հաշվում էին 1-ին 7—10 և ավելի։ Միջին բերքատվությունը կարելի է ընդունել 1-ին 8։ Միջակ տնտեսությունները՝ կիսանները, ունեին համեմատաբար թույլ հողեր ու պարարտացման շատ սահմանափակ հնարավորություններ։ Բերքատվությունն այս խմբում հաշվում էին 1-ին 5—8, միջինը՝ 1-ին 6։ Չքավոր տնտեսությունների՝ պճեղների հողաբաժինները ցածրորակ էին։ Արտերի պարարտացումն իսպառ բացակայում էր նրանց մոտ, ունեցած գոմաղբը վառելիքի պահանջն իսկ չէր բավարարում։ Այս խմբին պատկանող, ինչպես և բատրակների, ընտանիքները հարկադրված էին հանդերում, նախիրների հետքերով հավաքելու չորացած աթարը և կուն ու թրիքը։ Բերքատվությունն այս խմբում հաշվում էին 1-ին 4—6, միջինը՝ 1-ին 5։ Բրականությունից առնված այդ միջին տվյալների հիման վրա կազմելով Քիշմիշթափա գյուղի տնտեսությունների երեք խմբի համար ցանքերի ու բերքի մուտքի ու ելքի աղյուսակ, ստանում ենք հետևյալ պերճախոս թվերը։

Խմբեր	Ցանքատարածություն	Միջին բերքավորություն	Ընդհանուր բերք	Ելք (սոմար)			Համախառն արդյունք (սոմար)
				բահրա	սերմացու	գումար	
Համփա	40 սոմար	1-ին 8	320 սոմար	64	40	104	216
Կիսան	20 »	1-ին 6	120 »	24	20	44	76
Պճեղ	10 »	1-ին 5	50 »	10	10	20	30

Աղյուսակի ելքի սյունակի տվյալները ցույց են տալիս, որ բահրան ու սերմացուն կազմում են համփայի կամ ունևոր տնտեսության ընդհանուր բերքի 32,5%, ուրեմն համախառն արդյունք մնում է բերքի 67,5%։ Կիսանի կամ միջակ տնտեսության համար համապատասխան թվերն են՝ 36,6% և 63,4%, իսկ պճեղի կամ չքավոր տնտեսության համար՝ 40% և 60%։

Ամենից ավելի ուշադրություն են բևեռում իրենց վրա աղյուսակի վերջին սյունյակի բացարձակ թվերը։ Ամբողջ տարում տարած աշխատանքների դիմաց, բահրան ու սերմացուն դուրս գալուց հետո, համփային կամ ունևոր տնտեսությանը մնում է 216 սոմար (864 փութ) հացահատիկ, կիսանին կամ միջակ տնտեսությանը՝ 76 սոմար (304 փութ), իսկ պճեղին կամ չքավոր տնտեսությանը՝ 30 սոմար (120 փութ)։ Այստեղից պարզ է, որ նաև անասուններով ու համապատասխան եկամուտներով ապահովված ունևոր ծուխը միայն ցանքերի եկամուտով միշտ էլ ապահովված էր հացով (տարեկան 30 սոմար ամբողջ ընտանիքի համար)։ Դրանից զատ տնտեսության է՛լ ավելի ուժեղացման համար ունևոր ծխին մնում էր զգալի ավելցուկ՝ 186 սոմար (714 փութ)։ Միջակ ծուխը, որն ուներ անասնապահական սահմանափակ եկամուտներ, հացահատիկային աննշան ավելցուկ ուներ՝ 46 սոմար, որով և նա պիտի հոգար տնտեսության ա

[4] Այդ թվում բատրակներ՝ 4 ծուխ, խանութպաններ՝ 3 ծուխ, շրջիկ առևտրականներ՝ 2 ծուխ և արհեստավոր՝ 3 ծուխ։ Հայ բնակչությունից զատ Քիշմիշթափա գյուղում մշտապես ապրում ու բատրակություն-հովվություն էին անում քրդական երկու ընտանիք։

ընտանիքի մնացած բոլոր կարիքները։ Չքավոր ծուխն իր խղճուկ ցանքսերի համախառն եկամուտով կարող էր փակել ընտանիքի ցամաք հացի պահանջը միայն, իսկ այդ եկամուտի մի մասը հագուստեղենի հատկացնելու դեպքում ընտանիքը պիտի դառնար կիսաքաղց ու կիսամերկ։ Եթե համատարած այս պատկերին հակադրենք արտադրական ֆունկցիա չունեցող, ուրեմն և «գորտաբույծ Այպար-խանի բազմաթիվ գյուղերի միայն մեկից՝ Քիշմիշթափա փոքրիկ գյուղից գանձվող 900 սոմար տարեկան բահրան, ապա հասկանալի կդառնա աշխատավոր գյուղացիության, մանավանդ չքավոր ու միջակ տնտեսությունների ատելությունն ընդդեմ խանական-ֆեոդալական կարգերի, նրանց ցասումն ընդդեմ ամբողջ բերքի հնկնորդի չափին հասցրած բահրայի և ուրիշ պարտությունների։

բ) Բահրայի գանձման կապակցությամբ խանական գյուղը պարտավոր էր սնունդ ու կեր մատակարարել շահնային, նրա սպասավորին ու ձիուն՝ ամբողջ բերքահավաքի ընթացքում։ Դրանից զատ՝ ամեն անգամ կալը չափելիս ու բահրան գանձելիս գյուղացուց հավելյալ վերցվում էր շահնայի բաժինը՝ մեկ չանաղ (կուտ) հացահատիկ։

գ) Գանձված բահրան ամբարվում էր գյուղացիների հաշվին վարձված հատուկ պահեստում։ Բահրան այնտեղ լցնելուց առաջ պահեստի դուռը կնքվում էր կնիքով, իսկ աստիճանաբար գանձվող բահրայի պարկերը գյուղացիներն իրենք կուում ու կտրան երդիկից դատարկում էին պահեստ։ Ամբողջ բերքի կալսումն ու բահրայի գանձումը լիովին ավարտվելուց հետո խանը հատուկ ներկայացուցիչը ժամանում էր գյուղ, քանդում էր պահեստի կնիքը և չափելով ընդունում էր բահրայի պայմանավորված քանակությունը։ Այդ քանակից ավելին շահնայի շահույթն էր, անցնում էր նրա ազատ տնօրինությանը։ Եթե պահեստում ամբարված բահրան պակաս էր դուրս գալիս պայմանավորված քանակից, խանն այդ պակասորդը գանձում էր շահնայից։ Բահրան ընդունող խանական ներկայացուցիչը չափած և ընդունած բահրան գյուղացիների ձեռքով ու միջոցներով փոխադրում էր խանի կողմից մատնանշված վայրը (Մակվա պահեստներ, ջրաղացներ և այլն)։

դ) Պարտություններից ամենածանրը գյուղացիների համար՝ այդ խանական ձիեր պահելը, խնամելն ու կերակրելն էր ձմեռվա ամիսների ընթացքում։ Խաներն ունեին իրենց սեփական ջոկերը՝ կազմված ազնվացեղ ձիերից։ Տարվա տաք եղանակներին ջոկերն աղատարած պահվում էին մարգագետիններում և արոտավայրերում, իսկ ձմեռվա ընթացքում (շուրջ 4 ամիս) ձիերը պահելու-խնամելու էին տրվում խանական գյուղերին։ Այս պարտության կատարումն առանձնապես ծանր էր դառնում երկարատև ձմռան վերջերին, երբ պակասում, նույնիսկ սպառվում էին գյուղացիների հավաքած կերի պաշարները։

ե) Գյուղացիական պարտությունների շարքին էր պատկանում ամառանոց բարձրացած խանին և ընտանիքին հավ, ճուտ և ձու մատակարարելը։ Խաների ամառանոցը գտնվում էր Մակվից 12 կիլոմետր հեռավորության վրա, հրաշալի աղբյուրներով հարուստ Կարախաչի գավառում, ծաղկաշատ ու գեղատեսիլ լեռնահովտում։ Քիշմիշթափա գյուղի ռեսն էլ (տանուտերը) ամառվա ընթացքում մի քանի անգամ հավաքում ու Կարախաչ էր տանում որոշ քանակությամբ հավ, ճուտ, ձու։ Այս պարտության չափն ինձ հայտնի չէ, բայց ինքս անձամբ ականատես եմ եղել այն բանին, թե ինչպիսի աղմուկ, հայհոյանք և անեծք էր առաջացնում այս պարտության գանձումը գեղջկուհիների շրջանում։ Գյուղացիների վրա բավական թանկ էր նստում խանի կամ նրա ընտանիքի որևէ անդամի գյուղում հայտնվելը, որ տեղի էր ունենում տարեկան մի քանի անգամ։ Երբեմն այդպիսի այցելությունը կատարվում էր ամբողջ խմբով։ Խանը կամ նրա որդիներն իրենց ծառաներով, թազիներով (որսկան շներով) ու բազներով որսի էին ելնում և ճանապարհին իջնում գյուղ՝ հանգստանալու-սնվելու համար։ Գյուղը պարտավոր էր ամեն անգամ ըստ պատշաճին ընդունել ու գոհ ճանապարհել այդ անկոչ հյուրերին, կերակրել նրանց՝ ծառաներով, ձիերով ու թազիներով հանդերձ։

Վերոհիշյալ տուրքերն անփոփոխ կերպով, իսկ պարտություններն աննշան զանազանությամբ ծանրացած էին ամբողջ Մակվա խանության գյուղացիության չարքաշ ուսերին։ Այդ ծանրությունը մասամբ մեղմելու, սովից ու մերկությունից ազատվելու միակ միջոցը, հատկապես չքավորական մասսաների համար, աշխատավորական վաստակի մեկնելն էր դեպի Ռուսաստան։

4. Գյուղացիական շարժումը

1907 թվականի ամառվա սկիզբն էր։

Այդ ժամանակ ես 18 տարեկան պատանի էի, փոխադրվել էի Երևանի հայոց թեմական դպրոցի 5-րդ դասարանը (ուսման 8-րդ տարի)։ Օգտվելով ամառային արձակուրդից՝ ես Երե-

վանից մեկնեցի ծնողներիս մոտ։ Երևան—Ջուլֆա նորակառույց երկաթուղագծի Շահթախտ կայարանի մոտ լարանավով անցա Արաքսը և Արաբլար գյուղում ձի վարձելով՝ ճանապարհվեցի Մակու։ Հասնելով Մակու, իմացա, որ ամբողջ մարզում ծավալվել է գյուղացիական մեծ շարժում, որ սարդարը կարողացել է ծլկել Ռուսաստան։ Քաղաքը համարյա թե կտրված էր գյուղերից։ Հաջորդ օրը ծեգին ինձ արթնացրին ու հաղորդեցին, որ քաղաքի ամբողջ շրջակայքը դրավել են խանների դեմ կռվի ելած գյուղացիները։ Մակու քաղաքը տեղադրված է արևմուտքից-արևելք ձգվող երկու վերամբարձ լեռնաշղթաների արանքում ընկած ոչ այնքան ընդարձակ, բայց գեղատեսիլ հովտում, որի միջով ժայռապատ խոր հուն բացած հոսում է Ջանդիմար գետը՝ Արաքսի աջափնյա վտակներից մեկը։ Մակվա վիթխարի քարաժայռի տակ, ոչ շատ ընդարձակ գոգում կծկված է քաղաքն իր նեղլիկ փողոցներով ու միմյանց վրա կուտակված, հողածածկ կտուրներ ունեցող շենքերով, որոնց կողքին շեշտված կերպով աչքի են ընկնում խանների առանձնացած ամարաթներ-պալատները։

1907 թ. հունիսյան այդ պայծառ առավոտին Մակու քաղաքը պատնեշող լեռնաշղթաներն արտակարգ պատկեր էին ներկայացնում։ Նրանց վրա վխտում էին հազարավոր մարդիկ։ Բոլոր բարձունքներից լսվում էին զուռնա-թմբուկի ձայներ։ Մակվա խանության զինված և անզեն գյուղացիներն էին դրանք, որ ռուսական առաջին հեղափոխության հուժկու ազդեցությամբ արթնացել ու գլուխ էին բարձրացրել իրենց շահագործողների դեմ և տեղերում իրենց խորհուրդները՝ առջումաները հաստատելուց հետո եկել-շրջապատել էին խանական ոջը. որպեսզի գրավեն ամբ. ու ոչնչացնեն խանական հողատիրությունը, ֆեոդալական իրավակարգը։

Հարավային լեռնաշղթայի, մանավանդ հյուսիսային քարաժայռի կողմից քաղաք իջնելը բոլորովին անկարելի էր գյուղացիների համար։ Հնարավոր չէր քաղաք ներխուժել նաև արևելյան նեղ կիրճի կողմից։ Այս իսկ պատճառով ապստամբ գյուղացիներն իրենց գլխավոր ուժերը կենտրոնացրել էին արևմտյան կողմում, որտեղով անցնում է Բայազիտ տանող ճանապարհը։ Այս միակ մատչելի կողմից քաղաք մտնելու համար գյուղացիները պետք է անցնեին Սևակամուրջը, որի հանդեպ իշխող դիրք էր գրավում քաղաքի Հայկական թաղի վերևում գտնվող. մեծ քարազանգվածներով ծածկված բլուրը։ Խանականներն իրենց ուժերը կենտրոնացրել էին այդ բլրի վրա և կատաղի կերպով գնդակոծում էին Սևակամուրջին մոտենալ և անցնել կամեցող գյուղացիներին։

Երկրորդ օրը երեկոյան դեմ Այպար-խանը, որ սարդարից հետո ավագն էր հաշվվում խանների մեջ, իր նժույգի գավակն առած մահմեդական հոգևորականության առաջնորդին՝ մուշտայիդին, քաղաքից սրարշավ անցավ դեպի Սևակամուրջը։ Նա բարձրաձայն բղավում էր. «Աթմայը՞ն, աթմայը՞ն (մի՞ կրակեք, մի՞ կրակեք)։ Բլուրի վրա հրացանաձգությունը դադարեց։ Եվ հենց այդ դադարից օգտվելով՝ արևմտյան դիրքերից հարձակվող գյուղացիներն անցան Սևասամուրջը և Պստիկ-չայի ծառապատ ափերով աճապարեցին դեպի խանական դիրքը։ Բլուրի վրա պայթեցին հրացաններ... Խանականները խուճապի մատնվեցին ու դիմեցին փախուստի բուն քաղաքի կողմը, թողնելով սպանվածներ ու վիրավորներ։ Գյուղացիները զոհեր չունեցան։

Բլուրը դիտելի էր հարավային լեռնաշղթայի բոլոր բարձունքներից, ուստի կատարվածն անմիջապես հայտնի դարձավ այնտեղ գտնվող գյուղացիներին, որոնք հեղեղի նման մղվեցին դեպի քաղաք։ Մութը դեռ չընկած՝ քաղաքի արևմտյան արվարձանն ու Հայկական թաղն ապստամբների ձեռքին էր։ Խաները լուր էին տարածել, թե քաղաքը գրավելու դեպքում գյուղացիներն առաջին հերթին պիտի վնասեն ու կողոպտեն հայ բնակչությանը, որը մեծ երկյուղի ու շփոթության մեջ փակվել էր տներում։ Հայկական թաղը, որը թուրքերի ղեկավարությամբ կոտորածի ու ավերման ենթարկվեց առաջին իմպերիալիստական պատերազմին հաջորդած տարում (1919 թ.) գտնվում էր քաղաքի արևմտյան կողմում, Բայազիտ տանող ճանապարհի տակ ընկած առանձնացած տարածության վրա։ Թաղի ներքևում մոնչալով հոսում է Ջանդիմարը, իսկ վերևում կարկաչում է Պստիկ-չայը։ Այդ երկու գետերի արանքում հյուսիսից-հարավ իջնող մի քիչ թեք հարթության վրա ձգվում էր մի ուղիղ փողոց, որը երկու կողմերում ուներ նեղլիկ ճյուղավորություններ։ Հայկական թաղն ուներ շուրջ 65 տուն բնակչություն, որի ճնշող մեծամասնությունն արհեստավորական էր (ոսկերիչներ, զինագործներ, դարբիններ, պայտառներ, քարտաշ-որմնադիրներ և այլն)։ Կային մի քանի մանր առևտրականներ, ինչպես նաև խաների ծառաներ (ձիապան-ջորեպաններ, պարտիզպաններ և այլն)։ Իմ պապն, օրինակ, քարտաշ-որմնադիր էր, հայրս՝ դարբին, քեռիս՝ պայտառ։ Ես իջել էի քեռուս տանը, որովհետև մեր ընտանիքն ապրում էր Քիշմիշ-Բաֆա գյուղում, որ այդ օրերին նույնպես կտրված էր քաղաքից։ Չկարողանալով տանել խաների կամայականությունները՝ հայրս հրաժարվել էր նրանց համար ձրիաբար աշխատելու հարկադրանքից, ընտանիքով տեղափոխվել էր գյուղ և զբաղվում էր գլխավորապես անասնապահու-

թյամբ, որի համար հատուկ տուրքեր գնալու չկային։ Մինչ էր արդեն, երբ գյուղացիների շարքերում գտնվող հայրս եկավ Հայկական Թաղը և հանգստացրեց նրա հուզված բնակչությանը, որ տարածված լուրերը սուտ են, պարտատեր գյուղացիները հայերին դիպչելու կամ վնասելու ոչ մի ցանկություն ու տրամադրություն չունեն։ Եվ իրոք, խաների դեմ ելած ադրբեջանցի գյուղացիները միայն չվնասեցին հայերին, այլև չմտան ոչ մի տուն, չծեծեցին ոչ մի դուռ։

5. Առեւտուր ու պարտատիրութիւն

Մակվա արևմտյան կողմի գլխավոր դիրքը գրավելուց և քաղաքի այդ մասին տիրելուց հետո գյուղացիների շրջանում երևան եկավ անվստահություն։ Դրա գլխավոր պատճառը, թերևս, հաջողությունն անակնկալ ձևով բերելն էր ու միության վրա հասնելը։ Փաստն այն է, սակայն, որ անսպասելի հաջողությունից հետո գյուղացիներն առաջ չշարժվեցին, չգրավեցին բուն քաղաքն ու խանական որջերը, զինաթափ չարին խաներին ու խանականներին, այլ խաղաղությամբ մնացին գիշերելու Հայկական Թաղի շրջակայքում։ Եվ այս փաստը շատ շեշտված կերպով բացահայտում է Մակվա խանության գյուղացիների առաջին մեծ շարժման ամբողջ տարերայնութիւնը, դրսևորում է կուռ կազմակերպութեան ու կարող ղեկավարութեան իսպառ բացակայութիւնը մասսայական այդ շարժման մեջ։ Մութն ընկնելուց մոտ ժամ ու կես անցած՝ կայծակի արագությամբ լուր տարածվեց, թե սարդարը Մասիսի քուրդ բեկերի հեծելազորի գլուխ անցած արշավում է դեպի քաղաք։ Այստեղ, ահա, երևան եկավ Ալպար-խանի ու մուշտայիդի գործելակերպի ամբողջ խորամանկությունն ու դավադիր բնույթը։ Իրազեկ լինելով ցարական Ռուսաստան անցած սարդարի ծրագրին ու քայլերին և շատ լավ իմանալով, որ լեռնային տիրապետող բարձունքները գրաված գյուղացիության վրա հարձակվելը շատ դժվար կլինի սարդարի համար, նրանք չէին զոհեր տալու գնով գյուղացիներին իջեցրին լեռներից ու լցրին Մակվա փոսը։ Ստեղծված այս աննպաստ դրությունն էր, որ խուճապի մատնեց Հայկական Թաղի շրջակայքում գիշերած գյուղացիներին։ Սակայն այսպիսի պայմաններում էլ կուռ կազմակերպության ու հմուտ ղեկավարության առկայության դեպքում կարելի էր հաջողության հասնել։ Գյուղացիները կարող էին դարան մտնել քաղաքի արևմտյան մուտքի չափազանց նպաստավոր դիրքերում, ներս թողնել սարդարին ու քրդական բեկերի հեծելազորին և գլխովին ոչնչացնել նրանց։ Այս ուղղությամբ մտածող, ծրագրող ու կազմակերպող չեղավ։ Գյուղացիությունը դիմեց տարերային փախուստի։ Լույսը բացվելուց մոտ մի ժամ հետո սարդար Մուրթուզա-Ղուլի խանն անարգել մուտք գործեց քաղաք։ Նրա առջևից ու ետևից զուգաշար գալիս էր քրդական սպառազինված հեծելազորը։ Հետագայում հայտնի դարձավ, որ Ռուսաստան անցնելն էլ նախապես ծրագրված է եղել սարդարի կողմից. հյուրընկալվելով Երևանում Փանահ-խանի մոտ՝ նա ցարական կառավարությանն է դիմում և ստանում մաուզեր հրացաններ, պետական բանկ դրած իր գումարներից վերցնում է անհրաժեշտ քանակությամբ ոսկեդրամ և անցնում է Մասիսի քրդական ցեղերի առաջնորդ բեկերի մոտ (Առաջին իմպերիալիստական պատերազմից առաջ Փոքր Մասիսի լանջերն ու արոտները գրավված էին քոչվորական անասնապահությամբ, գլխավորապես խաշնարածությամբ զբաղվող քրդական ցեղերով (Ջալալցի, Կանդրկցի, Բուռկցի, Մլանցի, Ջերկցի և այլն)։ Քրդական ցեղերի առաջնորդներն ու բեկերը հաճախ դիմում էին ասպատակությունների ու կողոպուտների։ Երբեմն նրանք անցնում էին Արաքսը, մուտք գործում Երևանի նահանգի խորքերը, հասնում ամառային արոտավայրերին (Ալրիչա, Աղմաղան) և քշում-տանում էին հարյուրավոր անասուններ։ Ամառային արոտավայրեր բարձրանալիս (գարնան վերջին) և ձմեռոցներ իջնելիս (աշնան սկզբներին) քոչվոր ցեղերն իրենց բյուրավոր խաշներով ու անասուններով անցնում էին ճանապարհներին ընկած գյուղերով, արածացնում էին նստակյաց գյուղացիների հանդերը։ Իր հաշիվներից ելնելով՝ սարդարը մատների արանքով էր նայում քոչվորների այդպիսի խժդժություններին։ Քրդական քոչվոր ցեղերը սարդարին վճարում էին մեկ տուրք միայն՝ յուրաքանչյուր վրանը մեկ ոսկեդրամ (10 ռուբլի)։ Այդպես էր վճարում թե մի քանի ոչխար ու այծ ունեցող վրանը և թե հազարավոր խաշներ ու հարյուրավոր ձի ու տավար ունեցող ցեղապետը, բեկը կամ աղան։ Հողային տուրք էլ գոյություն չուներ քոչվոր ցեղերի համար։ Արոտավայրերն ու մարգագետիններն օգտագործում էին ցեղի բոլոր վրանները՝ ամեն մեկն իր ունեցած անասունների չափով։ Այս ամենի գիտաց քրդական ցեղապետներն ու բեկերը պահանջված ժամին սարդարի հլու կամակատարներն էին։ Մասիսի լանջերն անցած սարդար Մուրթուզա-Կուլի խանին քրդական ցեղապետներն ու բեկերը գրկաբաց ընդունեցին նաև այն պատճառով, որ նա բերել էր չափազանց գրավիչ նվերներ՝ մուզիններ ու ոսկի։ Սարդարի կողմից ընդդեմ գյուղացիների ծրագրված արշավանքն էլ շատ գրավիչ էր, որովհետև անարգել կողոպուտների լայն դուռ էր բացվում նրանց առաջ։ Եվ նրանց

բոլոր սպասելիքները լիովին արդարացան իրականում։ Մակու հասնելու հաջորդ օրը, վաղ առավոտից սկսած, բեկական հեծելազորն, ըստ սարդար Մուրթուզա-Կուլի խանի հրամանի, հետապնդելու դուրս եկավ դեպի իրենց խղճուկ խրճիթները փախչող գյուղացիներին։ Խանական իշխանության դեմ զենք բարձրացրած ամեն մի գյուղացու տեղն ու տեղը սպանելու համար սարդարը բեկերին խոստացել էր 2-ական արծաթ թուման (4 ռուբլի՝ ոսկեդրամով)։ Սպանվածների զենքը, հագուստը և ամեն ինչը դահիճների անվիճելի ավարն էր հանդիսանում։ Այդ արնոտ օրը բեկական ձիավորները փոքրիկ խուրջինների մեջ սարդար Մուրթուզա-Կուլի խանին մատուցում էին մարդկային կտրած ականջներ և յուրաքանչյուր զույգ ականջի դիմաց ստանում էին 2-ական արծաթ թուման...

6. Կարա-Հարիրը

Մակվա հյուսիսային քարաժայռի բարձունքները գրավել էին մերձարաքսյա գյուղերից խաների դեմ ելած գյուղացիները։ Նրանց շարքում էր Կարաթափա գյուղի գավակներից լավագույնը՝ Կարա-Հարիրը։ Նա եղել էր Ռուսաստանում, ուր մեկնել էր աշխատավորական վաստակի՝ կիսաքաղց յուր ընտանիքի կարիքները հոգալու համար։ Աշխատել էր երկաթուղային շինարարության վրա՝ իբրև սևագործ բանվոր։ Այժմ Կարա-Հարիրը իրենց շրջանի գյուղացիների գլուխն անցած եկել, գրավել էր Մակվա հյուսիսային քարաժայռի բարձունքները։ Կարա-Հարիրն ու իր ընկերներն անիրազեկ էին մնացել Մակվում կատարված վերջին իրադարձություններից։ Մեկ էլ նրանք տեսնում են դեպի իրենց արշավող բեկական հեծելախմբին։ Կարճատև կռվում գյուղացիները տալիս են մի քանի զոհ, իսկ շատերն օգտվելով լեռնային պայմաններից՝ կարողանում են անցնել դեպի գյուղերը։ Կարա-Հարիրին չի հաջողվում գյուղ անցնել։ Նա կռվելով նահանջում է դեպի հսկայական քարաժայռը և մեծ դժվարությամբ իջնում ու պատսպարվում է նրա վիթխարի պարսպի մեջ բացված այրերից մեկում։ Կարա-Հարիրին հետապնդողները սիրտ չեն անում մոտենալու քարաժայռի բերանին անգամ, էլ չենք խոսում քարայր իջնելու մասին։ Նրանք պահակներ են թողնում քարաժայռի գլխին և Կարա-Հարիրի լուրը բերում են սարդարին։ Վերջինս կարգադրում է պահակները չվերցնել ու սովամահ անել քարայրում պատսպարվածին։ Կարա-Հարիրը երկու օր անվտանգ մնաց քարայրում, ժամ առ ժամ ավելի և ավելի բորբոքելով սարդար Մուրթուզա-Կուլի խանի անզոր կատաղությունը։ Տեսնելով, որ հարկադրման միջոցով անկարելի է քարայրից դուրս բերել բնությանն ապավինած Կարա-Հարիրին, սարդարը յուր դաժան գործն ավարտելու փորձված միջոցին է դիմում։ Մեր կողմից արդեն հիշատակված դավադիր մուշտայիդը սարդարի կարգադրությամբ մեկնում է քարաժայռի գլուխը և բարձրաձայն կանչում է Կարա-Հարիրին, թե սարդարն արդեն ոչնչացրել է յուր դեմ ըմբոստացածներին և այժմ իրեն՝ մուշտայիդին ուղարկել է առաջարկելու, որպեսզի նա դուրս գա քարայրից ու ներկայանա սարդարին։

— Սարդարը խոստացել է այլևս արյուն չթափել։ Ես իբրև մուշտայիդ իմ կողմից էլ երդվում ու հավատացնում եմ, որ սարդարը չի գլխատի քեզ, այլ շուտով ընդմիշտ ազատ կարձակի։

Քարայրը մտնելու երրորդ օրը երեկոյան, արևամուտից քիչ անցած, լուր ստացվեց, թե Կարա-Հարիրին բերում են։ Քիչ հետո Բայազիտի ճանապարհի վրա երևաց բեկական հեծելազորի մի խումբ։ Առաջին շարքի ետևում երևաց Կարա-Հարիրը։ Նրան բերում էին ոտքով՝ ձեռքերը մեջքին կապած։ Նրա ետևից ձիավորներ էին հսկում։ Մռայլ էր Կարա-Հարիրը

Կես ժամ անց լուր հասավ, թե Բուղխանայի (սառցատան) մոտ նավթ լցնելով վրան՝ ողջ-ողջ հրկիզեցին Կարա-Հարիրին։ Բուղխանան գտնվում էր Բայազիտի ճանապարհի վրա, սարդարի պալատից մոտավորապես քառորդ կիլոմետր հեռու։ Բուղխանայի մոտից հոսում է Պատիկ-չայից եկող մի առվակ։ Հենց այդ առվակի եզրին, սարդարի պալատին դեռ չհասած, նույն ինքը սարդար Մուրթուզա-Կուլի խանի հրամանով Կարա-Հարիրի վրա լցրել էին մի մեծ աման նավթ ու գազանաբար հրկիզել ողջ-ողջ... Կարա-Հարիրի աճյունից ոչինչ չմնաց, նա գերեզման էլ չունի։

Կարա-Հարիրի անունը, որպես Մակվա մարզի գյուղացիության հեղափոխական առաջին շարժման մարմնացում, յուր պատվավոր տեղը կգրավի Իրանական Ադրբեջանի պատմության մեջ։